

# ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

## ՆԵՐԱԾԱԿԱՆ ՆՃՈՒՄՆԵՐ

- Ա. Սա Պողոսի կողմից գրված առավել ոչ պաշտոնական նամակներից է: Նա կարիք չունի այս եկեղեցուն ապացուցելու իր Առաքելական լիազորությունը՝ իշխանությունը: Նրանց հանդեպ իր ունեցած անսպառ սերն ակնհայտ էր: Նա նույնիսկ թույլ էր տվել նրանց, որ գումար ուղարկեն իրեն (տես՝ Փիլ. 1:5,7, 4:15), որը շատ անսովոր էր իր համար:
- Բ. Պողոսը բանտարկված էր, սակայն ավելի քան տասնվեց անգամ կիրառում է ցնծության համար կիրառվող տերմիններ (գոյականը և բայը): Նրա խաղաղությունն ու հույսը հանգամանքներից կախված չէին:
- Գ. Եկեղեցում առկա է կեղծ ուսմունքի տարրի ներկայությունը (տես՝ Փիլ. 3:2, 18-19): Այս հերետիկոսները կարծես թե նման էին Գաղատիայի եկեղեցիներում գտնվող հերետիկոսներին, որոնք կոչվում էին Հուդաիստներ: Նրանք ստիպում էին, որ նախքան անձր կկարողանա Քրիստոնյա դառնալ առաջին հերթին պետք է հրեա դառնա:
- Դ. Այս նամակը վաղ շրջանի Քրիստոնեական օրհներգի կամ շարականի մի օրինակ է ներառում իր մեջ (տես՝ Փիլ. 2:6-11): Այն համարվում է Նոր Կտակարանում ամենագեղեցիկ Քրիստոսոլոգիական հատվածներից մեկը (տես՝ Հովհաննես 1:1-14, Կող. 1:13-20, Եբր. 1:2-3): Պողոսն այն օգտագործում է որպես Քրիստոսի խոնարհության օրինակ, որին պետք է նմանվի յուրաքանչյուր հավատացյալ (տես՝ Փիլ. 2:1-5) և պարտադիր չէ վարդապետական իմաստով:
- Ե. 104 համարից բաղկացած մի գրքում Հիսուսի անունը կամ տիտղոսը հանդիպում է 51 անգամ: Ակնհայտ է, թե ով է գտնվում Պողոսի սրտի, մտքի և աստվածաբանության կենտրոնում:

## ՓԻԼԻՊՊԵՆ ԵՎ ՄԱԿԵՂՈՆԻԱՆ

- Ա. Փիլիպպե քաղաքը
  - 1. Ք.Ա. 356թ-ին այս քաղաքը զավթվեց և ընդարձակվեց Մակեդոնի Ֆիլիպ II-ի՝ Ալեքսանդր Մակեդոնացու հոր կողմից: Սկզբնական Թրակիա գյուղը անվանվեց *Krenides* (աղբյուրներ): Քաղաքը կարևոր էր տարածաշրջանում ոսկե հանքաքարի պատճառով:
  - 2. Ք.Ա. 168թ-ին Պիդնայի ճակատամարտում այս շրջանը դարձավ հռոմեական նահանգ, իսկ հետագայում Մակեդոնիայի չորս նահանգներից մեկը:
  - 3. Ք.Ա. 42թ-ին Բրուտուսն և Կասիուսը (որոնք պաշտպանում էին Հանրապետական կառավարությունը) պատերազմեցին Անտոնիոյի և Օկտավիանի դեմ (որոնք պաշտպանում էին Իմպերիալիստական կառավարությունը) Փիլիպպե քաղաքի մոտ, Հռոմում կառավարական վերափոխում բերելու համար: Այդ պատերազմից հետո Անտոնիոն իր հաղթանակած զենեարկներից ոմանց բնակեցրեց այստեղ:
  - 4. Ք.Ա. 31թ-ին, Ակտիումի պատերազմից հետո, որտեղ Օկտավիանը պարտության մատնեց Անտոնիոյին, վերջինիս կողմնակիցները Հռոմում վտարվեցին և արքայազնից ալիստները:
  - 5. Ք.Ա. 31թ-ին Փիլիպպեն դարձավ Հռոմեական գաղութ (տես՝ Գործք 16:12): Քաղաքի բնակիչները հռչակվեցին Հռոմի քաղաքացիներ: Քաղաքում խոսում էին լատիներեն և այն դարձավ կարծես թե մի փոքրիկ Հռոմ: Այն տեղակայված էր Իզնաույան Ճանապարհի վրա՝ արևելքն արևմուտքի հետ կապող գլխավոր հռոմեական մայրուղին: Որպես Հռոմի քաղաքացիներ նրանց տրված հատուկ արտոնություններն էին՝

- ա. գլխահարկ և հողի հարկ չէին տալիս
- բ. իրավունք ունեին սեփականություն առնելու և ծախելու
- գ. Հռոմեական օրենքով լիարժեք պաշտպանություն և իրավունքներ ունեին
- դ. ունեին տեղական կառավարման հատուկ առաջնորդներ (պրետորներ և լիկտորներ)

Բ. Ավետարանը մտնում է Փիլիպպե

1. Պողոսն իր երկրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ կամենում էր դառնալ դեպի հյուսիս, որպեսզի մտնի հյուսիս-կենտրոնական Ասիա (մերօրյա Թուրքիայի տարածք, սուրբգրային Բուրսանիա): Փոխարենը տեսիլքի մեջ տեսնում է Մակեդոնիայից՝ հյուսիսային Հունաստանից, մի մարդու (հավանաբար Ղուկասին), որը կանչում էր նրան, որպեսզի գար իրենց մոտ և օգներ (Գործք 16:6-10): Այս տեսիլքով Հոգին Պողոսին առաջնորդեց դեպի Եվրոպա:

2. Պողոսին ուղեկցում էին նրա օգնականները՝

ա. Ծիղան (Միվղանոսը)

- (1) Ծիղան Երուսաղեմի եկեղեցուց մի առաջնորդ և մարգարե էր, որը փոխարինեց Բառնաբասին, որպես Պողոսի միսիոներական ծառայակից (տես՝ Գործք 15:15, 22, 32, 36-41):
- (2) Ծիղան և Պողոսը, երկուսն էլ բանտարկված էին Փիլիպպեում (Գործք 16:16-26):
- (3) Պողոսը միշտ նրան Միվղանոս էր անվանում (տես՝ 2 Կորնթ. 1:19, 1 Թեսաղ. 1:1, 2 Թեսաղ. 1:1):
- (4) հավանական է, որ Ծիղան հետագայում դարձավ Պետրոսի գործակիցը, ինչպես Հովհաննես Մարկոսը (տես՝ 1 Պետ. 5:12):

բ. Տիմոթեոս

- (1) Նա դարձի էր եկել Պողոսի առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ (տես՝ Գործք 16:1-2, 2 Տիմ. 1:5, 3:15):
- (2) Նրա տատիկը և մայրը հրեա էին, իսկ հայրը՝ հույն (տես՝ Գործք 16:1, 2 Տիմ. 1:5):
- (3) Քանի որ նրա մասին լավ էին խոսում եղբայրները (տես՝ Գործք 16:2) և Պողոսը նրա մեջ տեսնում էր ծառայության պարզկները (տես՝ 1 Տիմ. 4:14, 2 Տիմ. 1:6), նա ընտրեց Տիմոթեոսին որպես Հովհաննես Մարկոսին փոխարինող օգնական (տես՝ Գործք 13:13):
- (4) Պողոսը թվատեց Տիմոթեոսին, որպեսզի հրեաները ընդունեն նրան (տես՝ Գործք 16:3):
- (5) Տիմոթեոսը դարձավ Պողոսի առաքելության վստահված անձը (տես՝ Փիլ. 2:19-22, 1 Կորնթ. 4:17, 3:2,6, 2 Կորնթ. 1:1, 19):

գ. Ղուկաս

- (1) Նա համարվում է անանուն, սակայն հավանական հեղինակը Ղուկասի Ավետարանի և Գործք Առաքելոցի:
- (2) Ըստ երևույթին նա եղել է հեթանոս բժիշկ (տես՝ Կող. 4:14): Ոմանք կարծում են «բժիշկ» տերմինը նշանակում էր «բարձրագույն կրթություն» ունեցող: Անշուշտ դա ճիշտ է, որ նա բացի բժշկությունից տեղեկացված էր մի քանի տեխնիկական ոլորտներում, ինչպես օրինակ նավարկությունն էր: Սակայն Հիսուսը կիրառում էր այս նույն հունարեն տերմինը «բժիշկ» բառի համար (տես՝ Մատթ. 9:12, Մարկ. 2:17, 5:26, Ղուկ. 4:23, 5:31):
- (3) Նա Պողոսին ընկերակցում էր իր ճամփորդությունների ժամանակ (տես՝ Գործք 16:10-17, 20:5-15, 21:1-18, 27:1-28:16, Կող. 4:14, 2 Տիմ. 4:11, Փիլիմոն 1:24):
- (4) Հետաքրքիր է, որ Գործքի «մենք» բաժինները սկսում և ավարտվում են Փիլիպպեում: *Պողոսը, Ազատագրված սրտով առաքյալը* գրքում (Էջ՝ 219), Ֆ.Ֆ. Բրյուսը

տալիս է, որ Ղուկասը մնում էր Փիլիպպեում, որպեսզի օգնի նորադարձներին և հավաքի հեթանոսների կողմից ընձաները Երուսաղեմի եկեղեցու համար:

(5) Հնարավոր է Ղուկասը ինչ որ իմաստով եղել է Պողոսի անձնական բժիշկը: Պողոսն ուներ մի քանի ֆիզիկական խնդիրներ՝ կապված իր դարձի գալու փորձառության հետ (տես՝ Գործք 9:3,9), իր ծառայության հետ (տես՝ 2 Կորնթ. 4:7-12, 6:4-10, 11:23-29) և իր հատուկ տկարության հետ (տես՝ 2 Կորնթ. 12:1-10):

3. Պողոսը վերադարձավ Փիլիպպե իր երրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ (տես՝ Գործք 20:1-3,6): Նա ավելի վաղ ուղարկել էր Ծիդային և Տիմոթեոսին (տես՝ Գործք 19:19-24, Փիլ. 2:19-24):

Գ. Փիլիպպեն որպես հռոմեական գաղութ (տես՝ Գործք 16:12)

1. Պողոսն այս քաղաքի կարգավիճակն իր տերմինաբանության մեջ օգտագործում էր որպես հռոմեական գաղութ

ա. «պրետորական /պալատական/ պահակ», Փիլ. 1:13

բ. «քաղաքացիություն», 3:20 (Գործք 16:22-34, 35-40)

գ. «Կայսրի տունը», Փիլ. 4:22

2. Քաղաքը բնակեցված էր թոշակառու և արտոբված հռոմեացի զինվորականներով: Շատ կերպերով այն նման էր «փոքրիկ Հռոմի»: Փիլիպպեի փողոցներում կարելի էր տեսնել Հռոմի քնահանույքները (տես՝ Գործք 26:21):

3. Թե՛ Պողոսը (Գործք 22:25, 26:32) և թե՛ Ծիդան (Գործք 16:37) Հռոմի քաղաքացիներ էին, որը նրանց օրինական իրավունքները և սոցիալական կարգավիճակը պաշտպանում էր:

Դ. Մակեդոնիայի նահանգը

1. Կանայք ունեին սոցիալական և տնտեսական ավելի շատ ազատություն Մակեդոնիայում, քան ամբողջ Հռոմեական Կայսրության մեջ որևէ այլ տեղ:

2. Սա լուսարանում է՝

ա. Փիլիպպեից դուրս գետեզրին գտնվող կանանց պաշտամունքի շատ սրբատեղիների առկայությունը (տես՝ Գործք 16:13)

բ. Լիդիա անունով գործարար կինը (տես՝ Գործք 16:14)

գ. կանայք, որոնք ավետարանի գործի մեջ մասնակից էին (տես՝ Փիլ. 4:2-3)

դ. մի քանի առաջնորդ կանայք, որոնց մասին նշվում է Թեսաղոնիկեում (նաև Մակեդոնիայում, տես՝ Գործք 17:4):

## ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Չափազանց անձնական նամակները մշտապես վերագրվել են Պողոսին: Առաջին դեմքի «Ես» և «իմ» դերանուններին այստեղ կարելի է հանդիպել 51 անգամ:

Բ. Այն մեջբերվում կամ ակնարկվում է վաղ շրջանի հեղինակների կողմից (այս մեջբերումների ամբողջական ցանկի համար տես՝ Հ. Ս. Ջ. Մուլի, *Փիլիպպեցիների Սերտոդությունները*, էջ՝ 20-21, հրատարակված Կրեգելի կողմից) .

1. Հռոմի Պապ Կղեմեսը իր *I Կղեմես*-ում, որը գրվել է Կորնթացիների եկեղեցուն, մոտ մ. թ. 95թ-ին:

2. Իզնատիուսը, *Իզնատիուսի Նամակները*, գրքում՝ մոտ մ. թ. 110թ-ին:

3. Պողիկարպոսը՝ Հովհաննես Առաքյալի ծառայակիցը, *Փիլիպպեցիներին ուղղված Նամակում*, մոտ մ. թ. 110թ-ին:

4. Մարկիոնական նախաբանը (հերետիկոս Մարկիոնի մի հետևորդ), որը գրվել է Պողոսի Փիլիպպեցիներին ուղղված նամակի համար՝ մոտ մ. թ. 170թ-ին:

5. Իրենեուսը՝ մոտ մ. թ. 180թ-ին:

6. Ալեքսանդրիացի Կղեմեսը՝ մոտ մ.թ.190թ-ին
7. Կարթագենացի Տերտուղիանոսը՝ մոտ մ.թ.210թ-ին:

Գ. Չնայած որ Տիմոթեոսը նշվում է Պողոսի հետ միասին Փիլ. 1:1 համարում, նա ծառայակից էր, ոչ թե Պողոսի հետ այս նամակի հեղինակ (չնայած որ հնարավոր է, որ ժամանակ առ ժամանակ նա եղել է Պողոսի համար որպես դպիր):

## ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Տարեթիվը պայմանավորված է այն փաստի հետ, թե որտեղ է Պողոսը եղել բանտարկված (տես՝ 2 Կորնթ. 11:23)

1. Փիլիպպեում՝ Գործք 16:23-40
2. Եփեսոսում՝ 1 Կորնթ. 15:32, 2 Կորնթ. 1:8
3. Երուսաղեմ /Կեսարիա՝ Գործք 21:32-33:30
4. Հռոմում՝ Գործք 28:30 (նշված է Փիլիպպեցիներին ուղղված նամակի Մարկիոնական Նախաբանում)

Բ. Շատ գիտնականներ հավատում են, որ Հռոմեական բանտարկությունը ամենաշատն է համընկնում Պողոսի կյանքի և Գործքի համատեքստի հետ: Եթե դա ճիշտ է, ապա այս նամակի գրառման ամենահավանական տարեթիվը պետք է որ լինի 60-ականների սկիզբը:

Գ. Այս գիրքը հայտնի է որպես Պողոս Առաքյալի «բանտի թղթերից» մեկը (Կողոսացիներ, Փիլիմոն և Փիլիպպեցիներ): Ներքին ապացույցներից ելնելով կարծես թե Կողոսացիներին, Եփեսացիներին և Փիլիմոնին ուղղված նամակները գրվել են շուտ՝ Պողոսի Հռոմեական բանտարկության ընթացքում և միասին ուղարկվել են Փոքր Ասիա Տյուրքիկոսի միջոցով (Կող. 4:7, Եփես. 6:21): Փիլիպպեցիներին ուղղված նամակն ունի տարբերվող տոնայնություն: Պողոսը կարծես թե վստահ էր, որ ազատվելու էր բանտից (Փիլ. 1:17-26) և այցելելու էր նրանց (2:24):

Այս կառույցը նաև Պողոսին ժամանակ է տրամադրում, որպեսզի (1) նրա ազդեցությունը հասնի մինչև կայսերական զինվորականներին (տես՝ Փիլ. 1:13, Գործք 28:16) և ծառաներին (տես՝ Փիլ/4:22) և (2) Փիլիպպեյի եկեղեցուց եկած պատգամաբերների և Պողոսի միջև հանդիպման համար մի քանի ճամփորդություններ լինեն:

## ՆԱՄԱԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ա. Փոխանցելու Պողոսի գոհունակությունն այս սիրառատ եկեղեցուն, որը նրան մի քանի անգամ օգնել էր ֆինանսապես և անգամ օգնական էր ուղարկել՝ Եպափրոդիտոսին (տես՝ Փիլ. 1:3-11, 2:19-30, 4:10-20): Հնարավոր է, որ նամակը նաև գրվել է բացատրելու, թե ինչու է Եպափրոդիտոսն ավելի շուտ վերադարձել տուն, երբ դեռ Պողոսը բանտում էր:

Բ. Փիլիպպեցիներին քաջալերելու բանտում իր իրավիճակների շուրջ: Ավետարանը իրականում տարածվում էր նաև բանտում: Պողոսը կապված էր, իսկ ավետարանը՝ ազատ:

Գ. Քաջալերելու Փիլիպպեցիներին, որոնք ապրում էին սուտ վարդապետների մեջ՝ շատ նման Գաղատիայի Հուդաիստներին: Այս հերձվածոդները պահանջում էին, որ նորադարձները դառնային առաջին հերթին հրեա և ապա Քրիստոնյա (տես՝ Գործք 15):

Այնուհանդերձ, քանի որ Փիլ. 3:19-ում տրված ցանկը համընկնում է Հույն սուտ վարդապետների (Գնոստիկների) հետ ավելի շատ, քան հրեաների, այդ իսկ պատճառով հերձվածոդների ինքնությունը հայտնի չէ: Հնարավոր է, որ որոշ հավատացյալներ հետ էին գնացել իրենց նախկին հեթանոսական կյանքին:

Դ. Քաջալերելու Փիլիպպեցի հավատացյալներին ուրախանալու անգամ ներքին և արտաքին հավաճանքների մեջ: Պողոսի ուրախությունը կախված չէր հանգամանքներից, այլ Քրիստոսի մեջ իր ունեցած հավատքից: Խնդիրների մեջ ուրախանալը, չէր նշանակում հրաժարական Ստոիկությունից, այլ Քրիստոնեական աշխարհայացք էր և հարատև պայքար: Պողոսը այլաբանություններ էր օրինակ բերում կյանքի տարբեր ոլորտներից, որպեսզի փոխանցի Քրիստոնեական կյանքի լարվածությունները:

1. Մարգական (տես՝ Փիլ. 3:12, 14, 4:3)
2. Ռազմական (տես՝ Փիլ. 1:7, 12, 15, 16, 17, 22, 28, 30)
3. Առևտրային (տես՝ Փիլ. 3:7, 8, 4:15, 17, 18):

## ՀԱՄԱՏԵՔՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Ա. Դժվար է ուրվագծել Փիլիպպեցիներին ուղղված նամակը, քանի որ այն շատ անձնական և ոչ պաշտոնական է: Պողոսը խոսում էր Քրիստոսում իր ընկերների և վստահված ծառայակիցների հետ: Նախքան նա իր մտքերը կշարադրեր, նրա սիրտն էր խոսում: Չարմանալիորեն թափանցիկ՝ պարզ կերպով այս գիրքը հայտնում է հեթանոսների Մեծն Առաքյալի սիրտը: Պողոսը «ուրախություն» էր զգում Քրիստոսի մեջ ցանկացած և բոլոր իրավիճակներում և ավետարանի ծառայության մեջ:

Բ. Գրական Բաժինները

1. Պողոսին հատուկ նախաբան, Փիլ. 1:1-2
  - ա. Ողջունի խոսք
    - (1) Պողոսից (և Տիմոթեոսից) Փիլ. 1:1
    - (2) Փիլիպպեի սուրբերին (ներառյալ երեցներն ու սարկավագները), Փիլ. 1:1
    - (3) Պողոսի ոճով աղոթք, Փիլ. 1:2
  - բ. աղոթք, Փիլ. 1:3-11
    - (1) առաջինը ավետարանի տարածման համար իր ծառայակիցների, Փիլ. 1:5
    - (2) Պողոսի ծառայության աջակիցների, Փիլ. 1:7
    - (3) Պողոսի խնդրանքը՝
      - (ա) սիրո համար, Փիլ. 1:9
      - (բ) գիտության համար, Փիլ. 1:9
      - (գ) զանազանության համար, Փիլ. 1:9
      - (դ) սրբության համար, Փիլ. 1:10
2. Պողոսի անհանգստությունը նրանց համար, քանի որ անհանգստանում էին իր բանտում գտնվելու համար, Փիլ. 1:12-26
  - ա. Աստված օգտագործեց Պողոսի բանտում գտնվելու ժամանակը, որպեսզի նա ավետարանը տարածի
    - (1) կայսերական պահակախմբին, Փիլ. 1:13
    - (2) Կայսրի տան մյուս անդամներին, Փիլ. 1:13, 4:22
    - (3) Պողոսի բանտարկությունը նաև համարձակություն էր հաղորդում մյուս քարոզիչներին, Փիլ. 1:14-18
  - բ. Պողոսի վստահությունը, որ ազատվելու է, քանի որ՝
    - (1) նրանք աղոթում էին իր համար, Փիլ. 1:19
    - (2) Սուրբ Հոգու շնորհիվ, Փիլ. 1:19
  - գ. Պողոսի վստահությունը թե՛ ազատվելու և թե՛ մահվան դեպքում, Փիլ. 1:20-26
3. Պողոսի քաջելարականը, Փիլ. 1:27-2:18
  - ա. հավաճանքի մեջ Քրիստոսակերպ միաբանության կոչ, Փիլ. 1:27-30

- բ. ապրելու Քրիստոսակերպ անձնուրացությամբ, Փիլ. 2:1-4
- գ. Քրիստոսը մեր օրինակը, Փիլ. 2:5-11
- դ. Քրիստոսի օրինակով ապրել խաղաղության և միաբանության մեջ, Փիլ. 2:12-18
- 4. Փիլիպպեի հետ կապված Պողոսի ծրագիրը, Փիլ. 2:19-30
  - ա. ուղարկել Տիմոթեոսին, Փիլ. 2:19-24
  - բ. վերադարձնել Եպափրոդիտոսին, Փիլ. 2:25-30
- 5. հաստատ կանգնել սուտ վարդապետների դեմ, Փիլ. 1:27, 4:1
  - ա. շները, սուտ թվատողները, Հուդաիստները (Գործք 15, Գաղատացիներին ուղղված թուղթը), Փիլ. 3:1-4
  - բ. Պողոսի հրեական ժառանգությունը
    - (1) սուտ վարդապետների թեմայի հետ կապված, Փիլ. 3:5-6
    - (2) Քրիստոսի հետ կապված, Փիլ. 3:7-16
  - գ. Պողոսի թախիծը նրանց համար, Փիլ. 3:17-21
- 6. Պողոսը կրկնում է իր հորդորները
  - ա. միաբանության, Փիլ. 4:1-3
  - բ. Քրիստոսանման հատկանիշների, Փիլ. 4:4-9
- 7. Պողոսը կրկնում է Փիլիպպեցիների օգնության համար իր երախտագիտության խոսքերը՝
  - ա. նրանց վերջին ընծայի համար, Փիլ. 4:10-14
  - բ. նրանց նախկին ընծայի համար, Փիլ. 4:15-20 (1:5)
- 8. Պողոսին բնորոշ փակման խոսք, Փիլ. 4:21-23

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)**

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Հետևաբար, մեկ անգամ նստելով ընթերցե՛ք սուրբգրային տվյալ գիրքը: Սահմանե՛ք ամբողջ գրքի կենտրոնական թեման ձեր իսկ բառերով (ընթերցանության ցիկլ #1):

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրական ժանրը

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)**

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Հետևաբար մեկ անգամ նստելով երկրորդ անգամ կարդացե՛ք ամբողջ սուրբգրային տվյալ գիրքը: Ընդգծե՛ք հիմնական թեմաները (ընթերցանության ցիկլ #2) և արտահայտե՛ք թեման մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. Եվ այլն